Օրինակ Ջերծա պարտուց:

ԳԼՈՒԽ ՀԸ.

Յայտնի լինի ամենեցուն որ ես Մանասէ որդոյ Սիմէօնի 'ի գեօղէ մեղրու կատարելապէս պարտականամ առ պարոն Սամուէլ որդոյ Աթանէսի 'ի գեօղէն յեղվարդայ, բովանդակն տուգանօքն վեց հարիւր դահեկան երծաթ հատուցումն նորին լաւ և հաստատապէս առնելն առ նոյն պարոն Սամուէլ, կամ իւր կտակակատարին ժառանգին և անուանելոյն, պարտական արարի իմ անձն կտակակատարն ժառանգն և անուանեալն հաստատապէս վկայից ներկայութիւնում 'ի յայսմ ձեռագրեցի և կնքեցի 'ի գեօղն մեղրի յայսմ աւուրս յուլիսի ամսի տասն և ութն յամի Տեառն մերոյ փրկչին մէկ հազար եօթն հարիւր եօթանասուն և երեք 1773:

Միենոյն վերոյ անուանեալ Մանասէ որդոյ սիմէօնի առեալ և ընկալեալ եմ վերոյ անուանեալ պարոն Սամուէլ, որդոյ Աթանէսի բոլոր ստոյգապէս բովանդակն երեք հարիւր դահեկան հայոց երծաթ որ ընթանայ առ 'ի պատասխանի 'ի վերայ բարի կարաւանի ընդ բեռինս, որում կարաւանապետնէ պարոն Մաղաքիայ որդոյ Սարգսի սեբաստացւոյ, կալ և ելանելն 'ի քաղաքէն գանջու առ 'ի քաղաքն արզրում, որ է կարին,